ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2502-Ա/2 «30» դեկտեմբերի 2022թ.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բաժնի «Երիտասարդություն» գլխի 51-րդ կետի 51.2-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերապատրաստման ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ՝ **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

12/30/2022

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հավելված
Հայաստանի Հանրապետության կրթության,
գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի
2022 թվականի N հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022

Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերապատրաստման ուղեցույցը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝ 2015 թվականից ի վեր «1115. Երիտասարդության ծրագիր» բյուջետային ծրագրի շրջանակում իրականացվող «Երիտասարդական աշխատողի վերապատրաստման դասընթաց» միջոցառման արդյունքները ու հաշվետվությունները և երիտասարդական աշխատողի ու երիտասարդական աշխատանքի մասին միջազգային փորձը:

Ուղեցույցը նախատեսված է այն կազմակերպությունների համար, որոնք զբաղվում են կրթական և/կամ վերապատրաստման ծառայությունների մատուցմամբ, մասնավորապես, երիտասարդության ոլորտում աշխատողների ուսուցման և/կամ վերապատրաստման դասընթացների կազմակերպմամբ և հայտ են ներկայացնում ՀՀ պետական ֆինանսավորմամբ իրականացվող «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացի կազմակերպման համար:

Ուղեցույցը կարող է օգակար լինել նաև այն երիտասարդական կազմակերպություններին, երիտասարդական կենտրոններին, երիտասարդների հետ սերտ աշխատող ցանկացած կազմակերպաիրավական ձև ունեցող իրավաբանական անձանց, ՏԻՄ-երում գործող և երիտասարդական պետական քաղաքականության հետ կապված գործառույթներ իրականացնող ստորաբաժանումներին, որոնք նպատակ ունեն կատարելագործելու իրենց աշխատողների ունակություններն ու հմտությունները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

Հիմնական հասկացություններ 6

Երիտասարդական աշխատանքը՝
որպես գործունեության ձև 7

Երիտասարդական աշխատանքի նպատակները 8

Երիտասարդական աշխատողին ներկայացվող մասնագիտական
պահանջները և էթիկայի նորմերը 9

«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում»
դասընթացի մեթոդաբանությունը 10

«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացի թեմաները 12

«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացի
իրականացման շղթայական փուլերը 13

Դասընթացավարների և փորձագետների ընտրության չափանիշներ 14

Մասնակիցներին ներկայացվող պահանջները, հավաքագրման և ընտրության ձևեր 18

Առցանց հարթակի ստեղծում և բազային տեղեկատվության տրամադրում 19

Դասընթացի իրականացման վայրի ամրագրում, անհրաժեշտ միջոցների ձեռքբերում 20

Դասընթացի անցկացման հիմնական փուլեր 21

Մասնակիցների գիտելիքների գնահատում 21

Դասընթացի արդյունավետության գնահատում 22

Դասընթացի մասնակիցների տվյալների արխիվացում և
հաշվետվության ներկայացում 22

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. ծրագրում ամրագրված է, որ ՀՀ կառավարությունը կարևորում է երիտասարդական ոլորտը, քանի որ յուրաքանչյուր պետություն ունի կայուն զարգացման հնարավորություն, եթե պատրաստ է ստեղծելու իրավական միջավայր և ապահովելու անհրաժեշտ ռեսուրսներ երիտասարդության ներուժի բացահայտման, համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման համար:

Ծրագրի հիմքում դրված է այն հայեցակարգային մոտեցումը, որ յուրաքանչյուր պետության տնտեսական, սոցիալական, հոգևոր կայուն զարգացման, մշակութային ժառանգության պահպանման, կրթական և գիտական ներուժի հզորացման, ազգային անվտանգության ամրապնդման գործընթացներում երիտասարդությունը՝ որպես պետության ռազմավարական ներուժային ռեսուրս, առանձնահատուկ դեր ունի:

Հայաստանի մինչև 2050 թվականը վերափոխման ռազմավարությունը՝ ի դեմս առաջին մեգանպատակի, ենթադրում է «գիտելիքի, մշակույթի, գիտակցության, հմտությունների համատարած, ներառական, նորարարական և հանրամատչելի զարգացման և յուրացման միջոցով ունենալ քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ ու մրցունակ քաղաքացի, ում համար իրավունքների իրացումը նույնքան կարևոր է, որքան պարտականությունների կատարումը, ով առաջին հերթին իրեն է համարում սեփական բարեկեցության և առողջության պատասխանատուն»: Այս նպատակին հասնելու համար երիտասարդների պարագայում առաջնային է իրենց ներուժի բացահայտման, կարողությունների շարունակական զարգացման, ինքնահրացման, ակտիվ քաղաքացիության դրսևորման համար անհրաժեշտ միջավայրի ձևավորումը, միջավայր, որտեղ առանձնահատուկ ուշադրություն կհատկացվի կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երիտասարդներին:

Հարափոփոխ աշխարհում, արդի հասարակության սոցիալ-տնտեսական փոխակերպումների պայմաններում էլ ավելի կարևոր է երիտասարդներին ուղղված նպատակային աշխատանքի կազմակերպումը, որը մի կողմից կապահովի նրանց համակողմանի զարգացումը, հիմնախնդիրների լուծումն ու նախասիրությունների բավարարումը, մյուս կողմից կնպաստի հանրային առաջընթացին և տնտեսության զարգացմանը՝ երիտասարդների կողմից ակտիվ քաղաքացիության դրսևորման միջոցով: Յուրաքանչյուր երկրում միշտ եղել են ու կան եռանդուն մարդիկ, այդ թվում՝ երիտասարդներ, ովքեր պատրաստ են ակտիվ և գործնական մասնակցություն ունենալ վերը թվարկած գործողությունների իրականացման հարցում: Ժամանակի ընթացքում այդպիսի մարդկանց գործունեությունը սկսել է առավել համակարգված բնույթ կրել՝ ի վերջո հանգեցնելով «երիտասարդական աշխատող» և «երիտասարդական աշխատանք» հասկացությունների առաջացմանը:

Անկախության տարիներից ի վեր Հայաստանի Հանրապետությունում հասարակական սեկտորի զարգացման և ակտիվ գործունեության ծավալման արդյունքում «երիտասարդական աշխատող» և «երիտասարդական աշխատանք» հասկացությունները բովանդակային փոփոխության են ենթարկվել: Եվ, չնայած, երիտասարդների հետ տարվող աշխատանքին, երիտասարդության՝ տարբեր ոլորտների խաչմերուկում գտնվելուն, երիտասարդական աշխատանքը, որպես

գործունեության ձև, տարեցտարի տարածում է ստացել՝ բնականոն կերպով հանգեցնելով «երիտասարդական աշխատանք և երիտասարդական աշխատող» ինստիտուտի հիմքերի ստեղծմանը:

Իսկ ո՞վ է երիտասարդական աշխատողը: Տարբեր երկրներում սահմանումները խիստ տարբեր են, թեև բոլոր ձևակերպումների հիմքում կարմիր թելով անցնում է այն գաղափարը, որը երիտասարդական աշխատողի գործունեությունը առաջին հերթին միտված է երիտասարդների անձնային աճին, նրանց ինքնահիրացման հնարավորությունների ստեղծմանը և հասարարական կյանքին ինտեգրմանն աջակցելուն: Սակայն երիտասարդների հետ աշխատելիս շատ հաճախ «երիտասարդական աշխատող» հաստիքով աշխատող կամ երիտասարդական աշխատողի գործառույթներ իրականացնող անձինք իրենց աշխատանքը կատարում են առանց ունենալու այնպիսի ունակություններ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են երիտասարդական աշխատանքն արդյունավետորեն իրականացնելու համար: Ուստի հանրային կյանքում երիտասարդական աշխատանքի երկարաժամկետ և լայնածավալ ազդեցությունն ապահովելու համար անհրաժեշտ են համապատասխան գիտելիքներով և հմտություններով «զինված» երիտասարդական աշխատողներ, ովքեր ոչ միայն կաշխատեն երիտասարդների հետ՝ հընթացս լուծելով նրանց հուզող խնդիրները, այլ նաև՝ կուղղորդեն և կաջակցեն երիտասարդներին՝ սեփական ներուժը բացահայտելու և իրացնելու տեսանկյունից:

Ահա այս նպատակին է ծառայում ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության շրջանակում իրականացվող ծրագրերից մեկը՝ «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացը, որն իրականացվում է 2015 թվականից ի վեր պետական ֆինանսավորմամբ՝ ներկայումս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համակարգմամբ:

Վերոնշյալ վերապատրաստման դասընթացի կազմակերպման, և առհասարակ, երիտասարդական դաշտում գործունեություն ծավալող կազմակերպությունների, համայնքային կառույցների կողմից իրականացվող երիտասարդական աշխատողների կարողությունների կատարելագործման ծրագրերի իրականացման համար էլ ստեղծվել է այս ուղեցույցը, որտեղ նկարագրված է երիտասարդական աշխատողի վերապատրաստման դասընթացի պլանավորման և անցկացման մեթոդաբանական մոտեցումները, վերապատրաստման համար կարևոր թեմաները, դասընթացի վարման ձևը և հիմնական առանձնահատկությունները, դասընթացի փուլերը, դասընթացում ընդգրկված անձանց գործառույթները:

Ուղեցույցը ընդգրկում է նաև երիտասարդական աշխատողի վերապատրաստման անհրաժեշտության հիմնավորումը, հիմնական ուղղությունները, աշխատանքային մեթոդները:

Ուղեցույցն ուղղված է երիտասարդական աշխատանքով զբաղվող բոլոր մասնագետների, երիտասարդների հետ գործնականում աշխատողների մասնագիտական և անձնային հմտությունների ու կարողությունների կատարելագործմանը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ուղեցույցում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- **Երիտասարդական աշխատող** – երիտասարդների հետ պրակտիկ աշխատանք իրականացնող անձ, որի գործառույթներից է նպաստել երիտասարդների անհատական, սոցիալական, կրթական աճին, բացահայտել և զարգացնել նրանց ներուժը, ձևավորել երիտասարդների նախասիրությունների և ետաքրքրությունների իրացման համար նպաստավոր միջավայր, խթանել հանրային կյանքին երիտասարդների մասնակցությունը:

Երիտասարդական աշխատողն իրազեկ է երիտասարդների իրական կյանքին, նրա տեղական պայմաններին, կարող է գնահատել իրավիճակը և երիտասարդների կարիքները, ընտրել ու կիրառել աշխատանքի համապատասխան մեթոդներ, իրականացնել կատարվող աշխատանքի ազդեցության վերլուծություն: Երիտասարդական աշխատողն աշխատում է երիտասարդական խմբերի հետ և նրանց համար, մշակում, իրականացնում և գնահատում է երիտասարդական ծրագրեր և նախագծեր, համագործակցում է տարբեր ոլորտների շահագրգիռ անձանց, խմբերի և կազմակերպությունների հետ:

- **Երիտասարդական աշխատանք** – աշխատանք երիտասարդների, երիտասարդական խմբերի հետ և նրանց համար, որն ուղղված է երիտասարդների կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, նրանց՝ կրթական, մշակութային, սոցիալական բնույթի հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում նրանց մասնակցության ապահովմանը և որոշումների կայացման հարցում մասնակցության մակարդակի բարձրացմանը:

Այլ կերպ ասած՝ երիտասարդական աշխատանքը երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացիության ձևավորման գործիք է: Այն ներառում է երիտասարդների հետ, երիտասարդների համար և երիտասարդների կողմից իրականացվող սոցիալական, մշակութային, կրթական, քաղաքացիական և քաղաքական բնույթի միջոցառումներ:

- **Կազմակերպություն** – ցանկացած կազմակերպաիրավական ձև ունեցող կազմակերպություն, որը ստանձնում է երիտասարդական աշխատողի վերապատրաստման դասընթացի պլանավորումը, կազմակերպումը, բարեհաջող իրականացումը, ունի ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրեր իրականացնելու, վերապատրաստման դասընթացներ անցկացնելու, կրթական և/կամ վերապատրաստման ծառայությունների մատուցման փորձառություն:
- **Դասընթացավար** - բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող մասնագետ, որը տեսական, գործնական, մասնագիտական գիտելիքներ է փոխանցում դասընթացի մասնակիցներին և նպաստում է դրանց յուրացմանը:
- **Փորձագետ** - համապատասխան ոլորտի մասնագետ, որը տիրապետում է երիտասարդության ոլորտի վերաբերյալ բազում և համակողմանի տեղեկատվության և գիտելիքների, կարող է մասնագիտական եզրակացություն տալ երիտասարդության ոլորտի խնդիրների վերաբերյալ, ունի կազմակերպչական հմտություններ:
- **Մասնակից** – կրթական ծրագրում ընդգրկված և ուսումնառող անձ, ով հաստիքային ձևակերպմամբ **«երիտասարդական աշխատող» է և/կամ**

իրականացնում է երիտասարդական աշխատողի գործառույթներ, ունի երիտասարդների հետ աշխատանքի որոշակի փորձ կամ իրականացնում է որևէ աշխատանք կամ ծրագիր երիտասարդների հետ երիտասարդների համար:

- **Մուտքային պահանջ** - մասնակցի համար ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից սահմանված կրթության որոշակի աստիճանի, զբաղմունքի, կարողության, իմացության, ստաժի և այլ առանձնահատուկ նախապայմանների առկայություն:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Վերջին երեք տասնամյակների ընթացքում ողջ աշխարհում հասարակական և համայնքային կյանքի բարելավման հարցերում կարևոր նշանակություն ունի երիտասարդական աշխատանքը: Ներկայումս փորձեր են արվում համատեղ ջանքերով մեծացնել երիտասարդական աշխատանքի ճանաչելիությունը հասարակական կյանքում և դրանով ապահովել դրա ինստիտուցիոնալ զարգացումը և կայունությունը:

Այդուհանդերձ, աշխարհի տարբեր երկրներ, միջազգային կառուցներ և միավորումներ տարբեր կերպ են մեկնաբանում երիտասարդական աշխատանքը և տարբեր սահմանումներ տալիս:

Այսպես, Եվրոպայի խորհուրդը նկարագրում է երիտասարդական աշխատանքը հետևյալ կերպ՝

«Երիտասարդական աշխատանքը լայն հասկացություն է, որն իր մեջ ներառում է սոցիալական, մշակութային, կրթական, բնապահպանական և/կամ քաղաքական բնույթի գործունեության տարբեր տեսակների լայն շրջանակ, ինչն իրականացվում է անհատական և խմբային ձևաչափով երիտասարդների հետ և վերջիններիս շահերից ելնելով:

Այն իրականացվում է հաստիքային աշխատողների կամ վճարովի կամ անհատույց հիմունքներով աշխատող կամավորների կողմից և բաղկացած է ոչ պաշտոնական և ոչ ֆորմալ գործընթացներից, որոնք ուղղված են երիտասարդներին և խրախուսում են նրանց մասնակցությունը: Երիտասարդական աշխատանքն, ըստ էության, սոցիալական կարևոր գործունեության ձև է, այլ կերպ ասած՝ համագործակցություն է երիտասարդների և այն հասարակության միջև, որտեղ նրանք ապրում են, ինչպես նաև աջակցություն է երիտասարդների ակտիվ մասնակցությանը այդ հասարակության կյանքում և որոշումների կայացման գործընթացներում ներգրավման հարցում:»



Եվրամիությունը երիտասարդական աշխատանքին տալիս է հետևյալ նկարագիրը՝

«Երիտասարդական աշխատանքը լայն հասկացություն է, որը ներառում է սոցիալական, մշակութային, կրթական կամ քաղաքական գործունեության տարբեր տեսակների լայն շրջանակ, որոնք իրականացվում են երիտասարդների հետ և նրանց համար: Այն համարվում է արտադպրոցական կրթություն և ժամանցի/հանգստի ձև, որը կազմակերպվում է հաստիքային աշխատողների, կամավորների և երիտասարդական շարժումների/նախաձեռնությունների ղեկավարների կողմից և ենթադրում է ոչ ֆորմալ ուսուցման գործընթացներ և կամավոր մասնակցություն:»

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Երիտասարդական աշխատանքն իրականացվում է երիտասարդական աշխատողի միջոցով՝

- երիտասարդական կենտրոններում/միջավայրերում,
- երիտասարդական հասարակական կազմակերպություններում,
- երիտասարդների ուսումնական գործընթացի տարբեր մակարդակներում,
- տարբեր հատուկ և մասնագիտական հաստատություններում,
- համայնքային կազմակերպություններում,
- ժամանցային վայրերում, ակումբներում:

Ստորև սահմանվում են այն նպատակները, որոնք իր առջև պետք է դնի երիտասարդական աշխատանքով զբաղվող կազմակերպությունը՝

- խրախուսել երիտասարդների մասնակցության մակարդակի բարձրացումը բոլոր մակարդակներում,
- օգնել նրանց զարգանալ և ինքնուրույն դառնալ,
- սատարել երիտասարդներին՝ իրագործելու իրենց գաղափարները,
- խրախուսել նախաձեռնողականությունը,
- աջակցել երիտասարդներին իրենց շրջապատում դրական փոփոխություններ իրականացնելու համար,
- խրախուսել երիտասարդների մոտ առաջնորդության հմտությունների զարգացումը, համայնքային որոշումների կայացման գործում մասնակցային վարքը,
- հնարավորություններ ստեղծել երիտասարդների ունակությունների, կարողությունների զարգացման և ոչ ֆորմալ կրթության համար,
- տրամադրել անհրաժեշտ հմտություններ և ունակություններ երիտասարդներին աշխատաշուկա մուտք գործելու համար,
- համապատասխան հարթակներ և միջավայր ստեղծել երիտասարդների ինքնաճանաչման, ինքնադրսևորման, ինքնուսուցման և հասարակության մեջ ինտեգրման համար,
- նպաստել երիտասարդների հետաքրքրությունների և նախասիրությունների բացահայտմանը և իրացմանը,

- ծանոթացնել երիտասարդներին իրենց գիտելիքներն ընդլայնելու ձևերին, եղանակներին ու գործիքներին և զարգացնել իրենց կյանքում հանդիպած խնդիրները վերհանելու ու լուծելու ունակությունները և այլն:

Երիտասարդական աշխատանքի նպատակները չեն կարող սահմանափակվել միայն վերը թվարկածով և, կախված միջավայրից, երիտասարդների կարիքներից և հետաքրքրություններից, կարող են նախանշվել նպատակներ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ՆՈՐՄԵՐԸ

Այն երկրներում, որտեղ երիտասարդության ոլորտը կարգավորվում է մի շարք իրավական ակտերով, առկա է «երիտասարդական աշխատող» մասնագետի պաշտոն և հաստիք պետական կամ տեղական մակարդակում, այդ երկրներում հաճախ ներդրված են ֆորմալ կրթական համակարգի կողմից առաջարկվող «Երիտասարդական աշխատանք»-ի կրթական ծրագրեր: Ըստ այդմ՝ սահմանված են նաև երիտասարդական աշխատողի որակավորման ստանդարտները և ուսումնառության արդյունքները:

Նկատի ունենալով երիտասարդական համայնքի առանձնահատկությունները և երիտասարդների հետ աշխատանքի յուրօրինակությունները՝ երիտասարդական աշխատանքը ենթադրում է մի շարք անձնային և մասնագիտական որակների համակարգ՝ երիտասարդության խնդիրների արդյունավետ իրականացման համար: Դրանցից են՝

<u>Մասնագիտական որակներ.</u>

- երիտասարդական պետական քաղաքականության իրազեկվածություն,
- երիտասարդների հետ աշխատելու գիտելիքներ ու փորձառություն, և այդ գիտելիքները ի նպաստ ոլորտի զարգացմանը ծառայեցնելու հմտություն,
- ձեռքբերված գիտելիքները ի նպաստ երիտասարդական աշխատանքի կիրառման հմտություն,
- ծրագրերի մշակման, իրականացման հմտություններ,
- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման բազային հմտություններ,
- ղեկավարման հմտություններ,
- գնահատման և մոնիթորինգի իրականացման հմտություններ,
- դասավանդման հմտություններ:

<u>Անձնային որակներ.</u>

- հարգալից վերաբերմունք այլոց նկատմամբ,
- հաղորդակցման հմտություններ,
- լսելու ունակություն – ակտիվ լսելու տեխնիկա,
- համբերություն,

- ազնվություն,
- պատասխանատվության զգացում,
- այլոց հանդեպ ոչ քննադատական մոտեցում,
- ապրումակցում,
- նպատակասլացություն,
- մարտահրավերներին դիմակայելու ունակություն,
- օգնելու, աջակցելու պատրաստակամություն,
- հնարամտություն, ճկունություն,
- առաջնորդության հմտություններ:

Կան մի շարք էթիկայի նորմեր, որոնց անհրաժեշտ և պարտադիր է, որ հետևեն երիտասարդական աշխատողները՝

- հավասարը հավասարին մոտեցում՝ երիտասարդների հետ աշխատանքում երիտասարդական աշխատողները պետք է նրանց հետ շփվեն հավասարը հավասարի հետ, այլ ոչ թե՝ որպես ենթակա,
- գաղտնիության պահպանում՝ երիտասարդների հետ աշխատելիս պետք է երաշխավորվի նրանցից ստացված տեղեկատվության գաղտնիությունը,
- անհատական մոտեցում՝ երիտասարդների հետ աշխատելիս նախևառաջ երիտասարդական աշխատողները պետք է տեղյակ լինեն յուրաքանչյուր երիտասարդի իրական կարիքներից, խնդիրներից, և, հաշվի առնելով վերջիններս, նրանց հետ աշխատեն՝ նպատակ ունենալով լուծել դրանք:

ՀՀ-ում ներկայումս ակադեմիական միջավայրում գոյություն չունի երիտասարդական աշխատողի պատրաստման կրթական ծրագիր: Սակայն հաշվի առնելով տարեցտարի ավելացող հաստիքային երիտասարդական աշխատողների կամ փաստացի երիտասարդական աշխատողի գործառույթ իրականացնող, սակայն այլ հաստիքով աշխատող անձանց մասնագիտական և անձնային որակների ու կարողությունների ձևավորման և կատարելագործման կարևորությունը՝ ՀՀ ԿԳՄՍՆ 2015 թվականից ի վեր իրականացնում է «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացը ոչ ֆորմալ կրթության գործիքակազմով, որի նպատակն է կատարելագործել երիտասարդների հետ պրակտիվ աշխատանք կատարող անձանց մասնագիտական և անձնային որակները՝ ազգային և ՏԻՄ մակարդակում որակյալ և գիտելիքահենք երիտասարդական աշխատանք իրականացնելու համար:

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ-ում երիտասարդական աշխատողի վերապատրաստումը կազմակերպվում է ոչ ֆորմալ կրթության գործիքակազմով, սկզբունքներով ու մեթոդներով և կարող է համադրվել էլեկտրոնային ուսուցման հետ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դասավանդման նոր հնարավորությունները տեղեկատվական ու հաղորդակցման տեխնոլոգիաների և ինտերնետի միջոցով թույլ են տալիս ուսումնական

տեղեկատվության փոխանակում իրականացնել նաև պարբերական լսարանային հանդիպումներից դուրս: Վերապատրաստումը պետք է լինի ինտերակտիվ և հնարավորություն ստեղծի երիտասարդների առավելագույն ընդգրկմանը ուսումնական գործընթացի մեջ:

«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացն իրականացվում է *եռափուլ փարբերակով,* իսկ դասընթացի երաշխավորված ժամաքանակը բաժանվում է երկու մասի՝

- առկա ժամաքանակ (լսարանային),
- ինքնուրույն աշխատանքի/գործնական աշխատանքի (արտալսարանային) ժամաքանակ:

Ընդ որում լսարանային ժամաքանակի շրջանակում կարող են իրականացվել համատեղ խմբային աշխատանքներ, որոնք կձևավորեն ուսումնառության այնպիսի արդյունք, որը չի կարող ապահովվել սոսկ դասախոսություններ ունկնդրելով և գրականություն ընթերցելով:

«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացի ժամանակ հատկապես առանձնակի նշանակություն ունի արտալսարանային գործնական աշխատանքների կատարումը, քանի որ ստացված գիտելիքներն ու մեթոդները հնարավոր է լիովին յուրացնել բացառապես երիտասարդների հետ գործնական աշխատանքների իրականացման դեպքում:

Դասընթացը պլանավորելիս պետք է նկատի ունենալ, որ, բացի տեսական գիտելիքից, տեխնիկական հմտություններից, մասնակիցները կարիք ունեն նաև գործիքների՝ երիտասարդների հետ տարվող աշխատանքներն արդյունավետ կատարելու և նրանց հիմնախնդիրներին լուծում տալու համար, իսկ այդպիսի կարողությունների աստիճանական ձևավորումը պետք է տեղի ունենա դասընթացի յուրաքանչյուր թեմայի շրջանակում:

Հենց այստեղ է, որ մասնակիցները սովորում են՝

- առավել գիտակցված և պատասխանատվությամբ վերաբերվել ստանձնած գործառույթներին,
- նախաձեռնել, ըմբռնել, գնահատել սեփական դերի կարևորությունը և իրենց աշխատանքի արդյունքում ստեղծվող արժեքները,
- արդյունավետորեն գնահատել և օգտագործել ձեռքբերված գիտելիքները,
- աշխատել առանձին և համագործակցել մյուսների հետ,
- որոշումներ կայացնել բարդ իրավիճակներում,
- ստեղծագործաբար մտածել և հաղորդակցվել:

Կրթական գործընթացի հաջողությունն առավելապես պայմանավորված է ոչ միայն դասավանդմամբ, այսինքն՝ գիտելիքի փոխանցմամբ, այլ մեծամասամբ՝ ուսումնառությամբ՝ մասնակիցների կողմից գիտելիքի յուրացմամբ: Ուստի կրթական վերջնարդյունքները գնահատելիս իրականում գնահատվում է ոչ թե գիտելիքի փոխանցման որակը, այլ գիտելիքի յուրացման որակը:

Եվ այս գործընթացում շատ կարևոր է ներկայացնել ուսումնառության նպատակների կարևորությունը, ցույց տալ մասնակիցներին, թե ինչպես են այդ վերջնարդյունքներն ուղղակիորեն օգնելու իրենց՝ երիտասարդների հետ հետագա աշխատանքում:

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Ստորև ներկայացվում է երիտասարդական աշխատողի վերապատրաստման դասընթացի թեմատիկ կառուցվածքը և վերջինիս ժամային բաշխվածությունը՝

	Թեմա	**Առկա ժամաքա-նակ**	**ինքնուրույն աշխատանքի ժամաքանակ (ներառյալ մենթորության ժամաքանակ)**
1.	Աշխատանք երիտասարդների հետ, երիտասարդներ և երիտասարդական աշխատողներ	6	12
2.	Երիտասարդական աշխատանքի զարգացում, երիտասարդական աշխատանքի կազմակերպման սկզբունքներ, մասնագիտական էթիկա, երիտասարդական քաղաքականություն և ծրագրեր	4	8
3.	Երիտասարդական աշխատողը՝ որպես թիմի անդամ, հաղորդակցման ոճերը, Միջմասնագիտական հաղորդակցություն	6	14
4.	Անձի ճանաչման և զարգացման փուլեր, մոտիվացիա. Երիտասարդության տարիք	2	6
5.	Երիտասարդների սոցիալական հիմնախնդիրները. Ինչո՞ւ և ինչպե՞ս	6	14
6.	Ուսումնառության տեսակները. Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթություն և կենսափորձ	4	10
7.	Ղեկավարման հմտություններ, առաջնորդության զարգացում, մասնագիտական կողմնորոշում	4	8
8.	Կոնֆլիկտների հաղթահարում. ներանձային և միջանձնային կոնֆլիկտներ	6	14
9.	Սակավ հնարավորություն ունեցող երիտասարդների հետ աշխատանքի հմտություններ	4	8
10.	Աջակցություն և խթանում երիտասարդների ինքնակազմակերպմանը և համախմբմանը	6	14
11.	Երիտասարդների՝ հանրային կյանքին մասնակցության խթանման գործիքակազմ և մեթոդներ	4	8
12.	Ֆոնդահայթայթում, ռեսուրսների	4	10

	ներգրավում		
13.	Ծրագրերի մշակում, իրականացում, մշտադիտարկում և գնահատում	6	16
14.	Երիտասարդական միջազգային համագործակցության ծրագրեր	2	6
		64	**148**

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՂԹԱՅԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացն իրենից ենթադրում է բազմափուլ և տարբեր բովանդակությամբ աշխատանքների, քայլերի հաջորդական իրականացում, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նպատակներն ու պահանջները:

Դասընթացի իրականացման հաջորդական շղթան ներկայացվում է ստորև՝

1. դասընթացավարների և փորձագետների ընտրություն՝ համաձայն դասընթացի թեմատիկ պլանի,
2. մասնակիցների հավաքագրում և ընտրություն,
3. առցանց հարթակի ստեղծում՝ դասընթացի շրջանակում ներկայացված բոլոր նյութերի ագրեգացիա,
4. երիտասարդական պետական քաղաքականության և, առհասարակ, երիտասարդության ոլորտին առնչվող փաստաթղթային փաթեթի տարածում մասնակիցների շրջանում,
5. դասընթացի իրականացման վայրի ամրագրում, անհրաժեշտ տեխնիկական միջոցների, նյութերի ձեռքբերում,
6. 1-ին փուլի դասերի մեկնարկ
7. ինքնուրույն աշխատանքների իրականացման փուլ -1
8. 2-րդ փուլի դասերի մեկնարկ
9. ինքնուրույն աշխատանքների իրականացման փուլ -2
10. 3-րդ փուլի դասերի մեկնարկ
11. գնահատում և ամփոփում
12. հաշվետվության ներկայացում

Վերը նշված գործողությունների մասին առավել մանրամասն խոսվում է ստորև 1ներկայացված տեքստում:

Ակնհայտ է, որ դասընթացի հաջողված լինելը կախված է ոչ միայն դասընթացավարի կողմից մատուցվող նյութի որակից և արդիականությունից, այլ առաջին հերթին դասընթացը ճիշտ կերպով պլանավորելու, նյութերը դասընթացի վերջնարդյունքների տեսանկյունից ճշգրիտ բաշխելու և դասընթացի ընթացքում մասնակիցների հետ համագործակցությունը կազմակերպելու եղանակներից:

Սա էլ իր հերթին խիստ պահանջներ է ձևավորում դասընթացի ծրագրի, կառուցվածքի, նյութերի և տնային հանձնարարությունների նկատմամբ:

Դասընթացավարների և փորձագետների ընտրության չափանիշներ

Մինչ դասընթացի ուսումնառության փուլի սկիզբը կազմակերպությունը ներկայացնում է դասընթացավարների ցանկ, որոնց աշխատանքային բնութագիրը պետք է համապատասխանի ստորև ներկայացված պահանջներին՝

ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐ
• երիտասարդական աշխատանքի առնվազն 3 (ցանկալի է 5) տարվա փորձ, • ՀՀ երիտասարդական ոլորտի իրազեկություն (երիտ. քաղաքականության, երիտասարդական աշխատանքի համակարգ, երիտ. ուսումնասիրություններ և այլն), • բարձրագույն մասնագիտական կրթություն, • ոչ ֆորմալ կրթության մեթոդաբանության հիմնական մոտեցումներին և գործիքարանին տիրապետում, • ոչ ֆորմալ կրթության ծրագրերում ուսուցողական թիմերում ներգրավվածության 3 տարվա փորձառություն, • երիտասարդական աշխատանքի հետ կապված ուսուցողական նյութերի մշակման փորձ, • տեխնիկական բնութագրում նշված ներկայացված թեմաների շուրջ առնվազն 5 ուսուցանման ծրագրերի իրականացման փորձ, • տեղեկատվությունը հասկանալի և մատչելի ձևով փոխանակելու ունակություն • գրագետ բանավոր և գրավոր խոսք, արդյունքների համապարփակ ներկայացման ունակություն • վերլուծական կարողություններ, ռազմավարական և ստեղծագործական մտածողություն:

Ստորև ներկայացված է դասընթացավարների աշխատանքի բնութագիրը, այդ թվում՝ գործառույթների շրջանակը՝

Դասընթացավարի աշխատանքային բնութագիր	
Աշխատանքի նպատակ	նախապատրաստել և իրականացնել դասընթացի մասնակիցների ուսուցանման գործընթացը և կազմել իր կողմից իրականացվող մոդուլի ծրագիրը
Աշխատանքի ծավալ	մասնակիցների հետ 35-37 ժամ ընդհանուր ծանրաբեռնվածությամբ ուսուցանման աշխատանք՝ ներառյալ դեմառդեմ (face to face) դասընթացները և աջակցությունը մասնակիցների կողմից իրականացվող ինքնուրույն աշխատանքներին
Գործառույթներ	• ուսուցման մեթոդաբանության, ուսուցողական խնդիրների մշակում • համաձայն ուսուցանման ծրագրի՝ իր կողմից իրականացվող ուսուցանման բլոկի մանրամասն ծրագրի կազմում • դասընթացների ընթացքում մասնակիցներին դեմառդեմ (face to face) ուսուցանման իրականացում • մասնակիցների կողմից իրականացվող ինքնուրույն աշխատանքների համար առաջադրանքների ներկայացում, հետադարձ կապ և աշխատանքների ուղղորդում • մասնակիցներին դիդակտիկ նյութերի և հավելյալ գրականության տրամադրում • երիտասարդական աշխատանքի սեփական փորձի և դեպքերի ներկայացում • յուրաքանչյուր փուլից հետո դասընթացի գնահատում և վերլուծություն, առաջարկների ներկայացում • յուրաքանչյուր փուլից հետո հաշվետվության ներկայացում

Բացի դասընթացավարներից՝ վերապատրաստման դասընթացի արդյունավետ իրականացման համար կազմակերպությունը ներգրավում է առնվազն երկու փորձագետի՝ դասընթացի ողջ ընթացքի սահուն կազմակերպման համար: Ստորև ներկայացվում են փորձագետների ընտրության չափանիշները՝

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՐՁԱԳԵՏ
• երիտասարդական աշխատանքի առնվազն 3 (ցանկալի է 5) տարվա փորձ • ՀՀ երիտասարդական ոլորտի իրազեկություն (երիտասարդական պետական քաղաքականություն, երիտասարդական աշխատանքի համակարգ, երիտա–սարդության ոլորտում կատարված ուսումնասիրություններ, զեկույցներ և այլն) • տեղեկատվությունը հասկանալի և մատչելի ձևով փոխանակելու ունակություն • վերլուծական կարողություններ, ռազմավարական և ստեղծագործական մտածողություն • թիմում աշխատելու հմտություններ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ
• երիտասարդական աշխատանքի առնվազն 2 տարվա փորձ • ՀՀ երիտասարդական ոլորտի քաջատեղյակություն (երիտասարդական

պետական քաղաքականություն, երիտասարդական աշխատանքի համակարգ, երիտասարդության ոլորտում կատարված ուսումնասիրություններ, զեկույցներ և այլն) • տեղեկատվությունը հասկանալի և մատչելի ձևով փոխանակելու ունակություն • վերլուծական կարողություններ, ռազմավարական և ստեղծագործական մտածողություն • մեծ ծավալի տեղեկատվության հետ աշխատելու հմտություն

Ստորև ներկայացված է փորձագետների աշխատանքի բնութագրերը, այդ թվում՝ գործառույթների շրջանակը՝

Դասընթացի կառուցվածքի փորձագետի աշխատանքային բնութագիր	
Աշխատանքի նպատակ	դասընթացի կառուցվածքի և փուլերի փորձագիտական վերլուծություն և փոփոխությունների առաջարկում
Աշխատանքի ծավալ	ողջ դասընթացի ընթացքում
Գործառույթներ	դասընթացի երեք փուլերի, թեմատիկ ծածկույթի և դասընթացի խնդիրներին համապատասխանության ուսումնասիրում՝ • երիտասարդական աշխատողների վերապատրաստման մոդուլների փորձագիտական ուսումնասիրություն և բարելավման առաջարկությունների ներկայացում, • դասընթացավարների կողմից առաջարկված թեմատիկ ծածկույթի փորձագիտական գնահատում • դասընթացի տրամաբանական կառուցվածքի առաջարկությունների ներկայացում, թեմաների հերթականության և կապի փորձագիտական մշակում • ուսումնական նյութերի համապատասխանության փորձագիտական գնահատում
Մասնակիցների ընտրության փորձագետի աշխատանքային բնութագիր	
Աշխատանքի նպատակ	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի հետ համակարգել և վերլուծել դասընթացին մասնակցության հայտ ներկայացրած դիմումները
Աշխատանքի ծավալ	դասընթացի մեկնարկային փուլում՝ հետ միջինը 20 ժամ ընդհանուր ծանրաբեռնվածությամբ
Գործառույթներ	• ստացված բոլոր դիմում հայտերի դասակարգում, մարզային ներկայացվածության և մոտիվացիոն նամակների ուսումնասիրում • մասնակիցների ներգրավվման չափանիշերի փորձագիտական քննություն • մասնակիցների ներգրավման արդյունավետության բարձրացման համար հարցազրույցների անցկացում և փորձագիտական խորհրդատվություն

	• հնարավոր շահագրգիռ մասնակիցերի որոնում և փորձագիտական խորհրդատվության ներկայացում

<u>Դասընթացավարը՝ որպես դասընթացի առանցքային օղակ</u>

«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացն առավել արդունավետ դարձնելու համար անհրաժեշտ է, որ թեմաների վարման/մատուցման համար ընտրվեն երիտասարդական աշխատանքի ոլորտին քաջատեղյակ, երիտասարդական աշխատանքի սկզբունքները կիսող ու կրող մասնագետ-դասընթացավարներ՝ բացառելու համար դասընթացի շրջանակից կտրված ընդհանրական թեմաների ներկայացումը:

Դասընթացում ընդգրկված ցանկացած դասընթացավար իր թեմայի շրջանակնում մատուցվող նյութը պետք է կազմի՝ ելնելով դասընթացի վերջնարդյունքներից: Դասընթացի արդյունավետությունն առավելապես կախված է այն հանգամանքից, թե որքանով են մասնակիցները հստակ պատկերացնում, թե ինչ հմտություններ պետք է զարգացնեն երիտասարդական աշխատողին համապատասխան կարողություններ և որակներ ձևավորելու համար:

Ուստի այս դասընթացում թե՛ բովանդակությունը, թե՛ սովորելու ընթացքում կոնկրետ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է ներառվեն՝ որպես ուսումնառության վերջնարդյունքներ:

Առավել արդյունավետ կլինի, եթե յուրաքանչյուր դասընթացավար իր կողմից ներկայացվող թեմայի մեկնարկին բացատրի, թե ինչով է պայմանավորված տվյալ թեմայի առկայությունը դասընթացի թեմատիկ պլանում և ինչպես է այն լրացնելու ընդհանուր ծրագիրը: Մասնակցին կարելի է ցույց տալ թեմայի և իր աշխատանքային գործառույթների միջև անմիջական կապը, ինչն իր հերթին, կարող է խթանել մասնակիցների առավել ակտիվությունը դասընթացի շրջանակներում:

Դասընթացի շրջանակում թեման ներկայացնելիս դասընթացավարը պետք է նախատեսի ոչ միայն այն, թե ինչ է սովորեցնելու մասնակիցներին դասընթացի նպատակին հասնելու համար, այլ նաև՝ թե ինչ պետք է անի մասնակիցը դրան հասնելու համար:

Այս դեպքում դասընթացավարն իր առջև քայլեր ձեռնարկելու խնդիր է դնում՝ նպաստելու մասնակիցների՝ իրենց ուսումնառությունն ինքնակազմակերպելու (ինքնուրույն աշխատանքի ժամաքանակ) համար պատասխանատվություն ստանձնելուն: Այդ քայլերից են՝

- դասընթացի շրջանակում նպաստել մասնակիցների կողմից՝ իրենց աշխատանքային գործառույթների կատարման համար փոքր քայլերի և նպատակների գծագրմանը,
- սովորեցնել պլանավորել այդ նպատակներին առնչվող խնդիրները,
- սովորեցնել հետևել սեփական առաջընթացին և իրատեսորեն գնահատել ձեքբերումները՝ դրանք ի նպաստ երիտասարդների հետ աշխատանքի ծառայեցնելու համար:

Դասընթացի յուրաքանչյուր ասպեկտ պետք է առավել արդյունավետորեն աջակցի մասնակցի կողմից ներկայացվող նյութի յուրացմանը: Այստեղից բխում է դասընթացավարի պատասխանատվությունը՝ օգնելու մասնակիցներին սովորել թե՛

բովանդակությունը (տիրապետել առարկայական գիտելիքի), թե՛ գործընթացը (տիրապետել գիտելիք ձեռք բերելու հմտություններին):

Կարող են պատահել դեպքեր, երբ դասընթացում ընդգրկված որոշ մասնակիցներ բավարար չափով իրազեկ չեն լինում երիտասարդական աշխատողին ներկայացվող բուն պահանջներից ու էթիկայի նորմերից, ուստի առավել քան անհրաժեշտ է ձևավորել այնպիսի ուսումնական միջավայր, որում մասնակիցները հնարավորություն կունենան լրացնելու դասընթացի նպատակին հասնելու համար պահանջվող գիտելիքները:

Այսպիսով դասընթացի ծրագիրն դասընթացավարի և մասնակցի միջև փոխգործակցության կարևոր հարթակ է՝ թե՛ լսարանում, թե՛ լսարանից դուրս, թե՛ առերես, թե՛ առցանց:

Մասնակիցներին ներկայացվող պահանջներ, հավաքագրման և ընտրության ձևեր

«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացի նախապատրաստական աշխատանքները սկսվում են դասընթացի մասնակիցների հավաքագրման համար հայտարարության տարածմամբ:

Սույն դասընթացի շահառու են համարվում՝

- երիտասարդական աշխատողները,
- մարզպետարանների և համայնքապետարանների աշխատողները,
- երիտասարդական կազմակերպությունների անդամները և կամավորները,
- գործող երիտասարդական կենտրոնների աշխատողները,
- սոցիալական աշխատողները,
- մշակույթի տան կամ գրադարանի աշխատողները, որոնց աշխատանքը գործնականում ի պաշտոնե կամ փաստացի ուղղված է երիտասարդների հիմնախնդիրների լուծմանը:

Ստորև ներկայացվում է մասնակիցներին ներկայացվող պահանջները, թե ինչպիսի չափանիշների պետք է բավարարի մասնակիցը՝ «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացին մասնակցելու համար՝

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ,
- երիտասարդության ոլորտում առնվազն 1 (ցանկալի է 3) տարվա փորձառությունը հավաստող տեղեկանք,
- կամավորական աշխատանքի փորձառությունը հավաստող տեղեկանք,
- ինքնակենսագրական,
- հետաքրքրության նամակ:

Մասնակիցների հավաքագրման համար պատասխատանու են ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան վարչությունն ու դասընթացն իրականացնող կազմակերպության կողմից ընտրված մասնակիցների ընտրության փորձագետը:

Մասնակիցների հավաքագրումն իրականացվում է բաց կանչի միջոցով, թափանցիկ և մի քանի եղանակներով, օրինակ՝

- դասընթացի վերաբերյալ պաշտոնական նամակի հղում երիտասարդական հասարակական կազմակերպություններին,
- մասնակիցների հավաքագրում ՏԻՄ խողովակով,

- հայտարարության հրապարակում ԶԼՄ-ներում, սոցիալական կայքերում և ցանցերում:

Կազմակերպությունը սույն ուղեցույցով սահմանված չափանիշներին համապատասխանող մասնակիցների ընտրությունը կարող է կատարել՝

- ըստ ներկայացված փաստաթղթերի և հետաքրքրության նամակի,
- նախնական մուտքային թեսթի միջոցով,
- հարցազրույցի միջոցով:

Ընդ որում նշված տարբերակներից կարող են կիրառվել ինչպես մեկը, այնպես էլ միաժամանակ երեքը՝ կախված դիմումատուների քանակից և հայտ ներկայացրած անձանց մասնագիտական փորձառությունից և որակներից:

Առցանց հարթակի ստեղծում և բազային տեղեկատվության տրամադրում

«Երիտասարդական աշխատողի վերապատաստում» դասընթացի մեկնարկից առաջ կազմակերպությունը պետք է ստեղծի առցանց հարթակ, որը կհամախմբի բոլոր մասնակիցներին և հնարավորություն կտա ապահովել մասնակիցների միջև կապը դասընթացի ողջ ընթացքում:

Դասընթացը պետք է պարունակի անհրաժեշտ տվյալներ յուրաքանչյուր թեման (թեմաները) վարող դասընթացավարի՝ կրթական, հետազոտական փորձառության, ինչպես նաև՝ մասնագիտական հետաքրքրությունների մասին, որպեսզի մասնակիցը դասընթացավարի հետ կապ հաստատելու հիմնական եղանակների և կարգի վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն ունենա:

Այդ նպատակով դասընթացի մեկնարկից առաջ կազմակերպությունը առցանց հարթակում տեղադրում է հակիրճ տեղեկատվություն ինչպես բոլոր դասընթացավարների մասին՝ հիմնականում ցույց տալով դասընթացավարների կապը նրանց կողմից ներկայացվող թեմայի (թեմաների) հետ, այնպես էլ՝ թեմաների վերաբերյալ դասընթացավարների տրամադրած տեղեկատվությունը:

Թեմաների վերաբերյալ դասընթացավարների տեղեկատվական փաթեթների (սահիկաշար, գործնական աշխատանքի նյութեր, վարժություններ, գրականություն, մուլտիմեդիոն նյութեր և այլն) հասանելիությունը մեկը մյուսին մեկ ընդհանուր էլեկտրոնային հարթակի միջոցով թույլ կտա ապահովել թեմաների փոխլրացումը և տրամաբանական կապը՝ բացառելով դասընթացի ընթացքում տեղեկատվության կրկնաբանությունը և տեղեկատվության դիսկրետ բնույթը:

Նման մոտեցումը հնարավորություն կտա առավել համակարգված անցկացնել դասընթացը, ինչպես նաև հնարավորություն կտա մասնակիցներին նախապես ծանոթանալ դասընթացավարների մասնագիտական փորձառությանը, որոշակի նախնական գիտելիքներ ունենալ յուրաքանչյուր թեմայի մեկնարկից առաջ:

«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացի մասնակիցների ընտրության համար սահմանված չափանիշները ենթադրում են մասնակիցների մոտ երիտասարդական ոլորտի վերաբերյալ գիտելիքների որոշակի պաշարի առկայություն և երիտասարդական ոլորտում փորձառություն: Այդուհանդերձ միշտ չէ, որ հավաքագրված մասնակիցները գիտելիքի և հմտությունների

տեսանկյունից գտնվում են միևնույն հարթության վրա: Ուստի դասընթացի ուսումնառության փուլի բուն մեկնարկից առնվազն 2 շաբաթ առաջ դասընթացն իրականացնող կազմակերպության կողմից ընտրված դասընթացի կառուցվածքի փորձագետը մասնակիցներին առցանց տրամադրում և հանձնարարում է ծանոթանալ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականությանն առնչվող իրավական ակտերին, հիմնական տեղեկատվական և մեթոդական նյութերին, ներառյալ առցանց տեղեկատվական աղբյուրները, երիտասարդական աշխատանքի մասին ներածական տեղեկատվությունը, այն նկատառումով, որ վերջիններս ոչ միայն կձևավորեն ոլորտային իրազեկվածության նվազագույն շեմ և կնախապատրաստեն մասնակիցներին առաջիկայում սպասվելիք թեմաները դյուրությամբ յուրացնելու համար, այլ նաև՝ հետագայում կծառայեն որպես տեղեկություն փնտրելու և հղում կատարելու շտեմարան:

Դասընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար կազմակերպությունը կարող է մինչ դասընթացի մեկնարկը առերես և/կամ առցանց հանդիպումներ կազմակերպել բոլոր դասընթացավարների հետ՝ վերջիններիս աշխատանքը փոխկապակցված և փոխլրացնող դարձնելու համար:

Դասընթացի իրականացման վայրի ամրագրում, անհրաժեշտ միջոցների ձեռքբերում

«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացի իրականացման համար անհրաժեշտ է նախատեսել հարմարավետ աշխատանքային տարածք՝ ապահովված դասընթացի համար անհրաժեշտ գրատախտակով, պրոյեկտորով և համակարգչով:

Աշխատանքային տարածքը պետք է ներառի 1 ընդարձակ սրահ դասախոսությունների համար՝ համապատասխան քանակությամբ սեղան-աթոռներով, և առանձին հարմարավետ անկյուններ՝ համատեղ գործնական աշխատանքների համար:

Դասընթացի անցկացման համար անհրաժեշտ է նախապես ձեռք բերել որոշ գրենական պիտույքներ, այդ թվում՝ ֆլիպչարտ, գունավոր թղթեր, մարկերներ, ինքնակպչուն թղթեր, մասնակիցներին տրամադրվող փաթեթներ՝ գրիչ, բլոկնոտ, տեղեկատվական հրահանգավորման թերթիկ:

Մասնակիցներին մտահոգող ամենակարևոր հարցերից է իմանալ, թե դասընթացը որտեղ է տեղի ունենալու, ինչ պայմաններում, երբ և ինչ է դասավանդվելու: Այս հարցերը պարզաբանելու և դասընթացի մասին առավելագույնս իրազեկվածություն ապահովելու համար դասընթացի մեկնարկին մասնակիցներին տրվում է ինֆո փաթեթ դասընթացի անցկացման վայրի, պայմանների, դասընթացի փուլերի, թեմաների, դրանց բաղադրիչների ժամանակացույցի, թեմաների ժամաքանակների, ինքնուրույն աշխատանքի ժամաքանակի, գնահատման չափանիշների, դասընթացավարների, ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունների վերաբերյալ:

Դասընթացի անցկացման հիմնական փուլեր

«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացը կազմակերպվում է երկարաժամկետ և բազմափուլ ուսուցման ձևաչափով:

Դասընթացը բաղկացած է մի քանի առկա (օֆֆլայն) դասընթացներից, որոնց միջև ընկած ժամանակահատվածում մասնակիցները պետք է աշխատեն իրենց գործնական առաջադրանքների վրա:

Ընդհանուր առմամբ դասընթացն ընդգրկում է 3 հիմնական փուլ՝

- I փուլի տևողությունը 4 օր է և բաղկացած է առկա պարապմունքներից և ինքնուրույն աշխատանքներից՝ ընդհանուր 24 առկա և 56 ինքնուրույն աշխատանքի ժամեր: I փուլը ներառում է թեմատիկ պլանի 5 թեմա,
- II փուլի տևողությունը ևս 4 օր է և բաղկացած է առկա պարապմունքներից և ինքնուրույն աշխատանքներից՝ ընդհանուր 22 առկա և 46 ինքնուրույն աշխատանքային ժամեր: II փուլը ներառում է թեմատիկ պլանի 4 թեմա,
- III փուլի տևողությունը 3 օր է՝ բաղկացած առկա պարապմունքներից և ինքնուրույն աշխատանքներից՝ ընդհանուր 18 առկա և 46 ինքնուրույն աշխատանքային ժամեր: III առկա փուլը ներառում է թեմատիկ պլանի 3 վերջին թեմաները:

Փուլերի միջև ընկած ինքնուրույն տնային աշխատանքի ժամանակահատվածը պետք է լինի առնվազն 20 օր: Ինքնուրույն տնային աշխատանքը ենթադրում է դասընթացավարի հանձնարարած գործնական առաջադրանքների իրականացում, դրանց ուղղորդում և մեթոդական աջակցություն:

Դասընթացն ավարտվում է III առկա փուլի 3-րդ օրը դասընթացի արդյունքների վերաբերյալ մեծ քննարկմամբ և գնահատմամբ:

Յուրաքանչյուր փուլի մեկնարկին և՛ դասընթացավարները, և՛ մասնակիցները լրացնում են մասնակցության թերթիկ, որը նաև ծառայում է որպես չափիչ գործիք մասնակցին՝ դասընթացի մասնակցության հավաստագիր շնորհելու համար, քանի որ հավաստագիր է շնորհվում այն մասնակիցներին, ովքեր մասնակցել են դասընթացների 80%-ին և և կատարել ինքնուրույն տնային աշխատանքների 80%-ը:

Մասնակիցների գիտելիքների գնահատում

Խիստ ցանկալի է, որ դասընթացի մասնակիցները նախապես իմանան, թե ինչպես է գնահատվելու իրենց մասնակցությունը և ինչ ժամկետներում պետք է իրականացվեն ինքնուրույն տնային աշխատանքները:

Գնահատման համակարգը կարող է ներառել ուսումնառության արդյունքի գնահատում հետազոտական հաշվետվությունների, վերլուծությունների, նախագծերի, էսսեների առաջադրանքների, ցուցադրությունների միջոցով:

Այս դեպքում խոսքը գնում է տվյալ թեմայի (թեմաների) շրջանակում մասնակցի կողմից յուրացված գործնական կարողությունների գնահատման մասին: Այդ պատճառով էլ ճիշտ չէ հանձնարարել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարումը

հանգում է թեմայի շրջանակում մատուցված տեսական նյութի կամ գրքի որոշակի նյութերի վերաշարադրմանը:

Ընդ որում գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր փուլի ավարտին:

Դասընթացի արդյունավետության գնահատում

«Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացի փուլերի միջև ընկած ժամանակահատվածներում, ինչպես նաև՝ դասընթացի ավարտին իրականացվում է երկկողմանի գնահատում. դասընթացի արդյունավետությունը գնահատում են և՛ մասնակիցները, և՛ դասընթացավարները՝ նախապես կազմված առցանց հարցաշարերի միջոցով: Հարցաշարերի գործածումը չի կարող բացառել հավելյալ տեղեկատվության հավաքագրումը անհատական հարցախույզերի, ֆոկուս խմբային հարցումների անցկացումը:

Հարցաշարերի միջոցով հավաքագրված տեղեկատվությունը վերլուծվում է «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» դասընթացն իրականացնող կազմակերպության կողմից: Ներկայացված առաջարկությունները և դիտողությունները կարող են հիմք դառնալ դասընթացի բովանդակության, կառուցվածքի, թեմատիկ պլանի ժամային բաշխվածության, կազմակերպչական հարցերի վերանայման համար:

Դասընթացի մասնակիցների տվյալների արխիվացում և հաշվետվության ներկայացում

Դասընթացի ընթացքում մասնակիցների համաձայնությամբ հավաքագրվում են նրանց կոնտակտային տվյալները՝ երիտասարդական աշխատողների տվյալների շտեմարանը համալրելու նպատակով: Այս գործողությունը հետագայում հնարավորություն կտա ստեղծել երիտասարդական աշխատողների ընդհանուր միջավայր, որն էլ իր հերթին կօժանդակի տարբեր կազմակերպությունների, ՏԻՄ-երի, երիտասարդական կենտրոնների աշխատանքներում ընդգրկված երիտասարդական աշխատողներին իրականացնել տեղեկատվության և մասնագիտական փորձի փոխանակում, հնարավորության դեպքում՝ առկա ռեսուրսների համատեղ կիրառում՝ ստեղծելով սիներգիայի էֆեկտ:

Դասընթացի ավարտից հետո ներկայացվում է ամփոփ հաշվետվություն, որը ներառում է մասնակիցների հաճախելիության, դասընթացավարների, մասնակիցների տվյալների, ինքնուրույն տնային աշխատանքների, դասընթացի գնահատումների և դրանց հիման վրա կատարված եզրակացությունների, բովանդակային առաջարկությունների մասին տեղեկատվություն: